



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 23-Լ

«25» հունիսի 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆՊԱՏԱԿԱԿԵՏ
ՀԱՆՐԱՀՌՉԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՆԹԱԿԱ ՏԱՐՐԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի ապրիլի 10-ի N 412-Ն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի 6-րդ կետի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետությունը որպես նպատակակետ հանրահոշակելու համար ենթակա տարրերը՝ համաձայն հավելվածի:

X

ՆԱԽԱՐԱՐ՝

Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆՊԱՏԱԿԱԿԵՏ
ՀԱՆՐԱՀՈՉԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԻԵՐ**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում առկա ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային արժեքների/վայրերի ցուցադրում:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 3-ի «Հայաստանի Հանրապետության մշակութային տարածքների ճանաչման չափորոշիչները և մշակութային տարածքների ցանկը հաստատելու մասին» N 241-Ն որոշմամբ սահմանված տարածքներից առնվազն մեկում նկարահանումների իրականացում:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային արժեքների ցանկերի կազմման չափորոշիչները և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը հաստատելու մասին» N 310-Ա որոշմամբ սահմանված ոչ նյութական մշակութային արժեքների ներկայացում:
4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշմամբ սահմանված բնության հուշարձանների ցուցադրում:
5. Պատմամշակութային վայրերի ցուցադրում
 - 1) Վանքեր, եկեղեցիներ, բերդեր, հնավայրեր
6. Հայկական ինքնության խորհրդանիշների կիրառություն
 - 1) Հայերեն լեզու (խոսք կամ գիր)
 - 2) Հայկական երաժշտություն (գեղարվեստական կամ ժողովրդական)
 - 3) Տարազներ, ազգային տոնական ծեսեր, ավանդույթներ
 - 4) ՀՀ դրոշի և/կամ զինանշանի տեսանելի ներկայացում
 - 5) Պետականություն խորհրդանշող կառույցների կամ վայրերի ցուցադրում

7. “Filmed in Armenia” («Նկարահանվել է Հայաստանում») գրառման և հայկական տեղանունների ընդգրկում՝ տեսարաններում կամ ֆիլմի վերջում:

8. Հայոց պատմական իրադարձության, էպոսի կամ հայկական գրական ստեղծագործության մասին կամ հիմքով ֆիլմի նկարահանում՝ սցենարում դրանց մասնակի կամ ամբողջական ընդգրկմամբ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Հայաստանի Հանրապետության տարածքում ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության վայրերի, Հայաստանի Հանրապետության մշակութային տարածքների, Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների, Հայաստանի Հանրապետության պատմամշակութային կոթողների ցուցադրման դեպքում պարտադիր պայման է դրանց անվանումների, տեղանունների, տեղանքների նշումը ֆիլմի ընթացքում կամ ֆիլմի վերջում: Տեսարանները ֆիլմի ընթացքում պետք է ցուցադրվեն առնվազն 10 վայրկյան տևողությամբ: